Բ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 6 ՆՈՅԵՄԲԵՐ 1899 — ԹԻՒ 178

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ղուլկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Դրանուցման տոկոսը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքեն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

)( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )(

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ ղրկել
Խմբագրութեանս հասցէին

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

—

Գրութիւնք ետ չեն տրուիր

)( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )(

## ԱԶԴ

Պատիւ ունիմ ծանուցանել տեղւոյս մէջ բնակութիւն հաստատող մեր յարգոյ գաղթական ազգայնոց, որ իրենք եւս այսուհետեւ տեղւոյս ազգայնոց նման իրաւունք ունին քուէարկութեան մասնակցելու, ուստի զայս ի դիտութիւն կը հրաւիրեմ ան ամէն գաղթական ազգայինքն՝ որ գալ բարեհաճին իրենց անունները արձանագրել տալ տեղւոյս ազգայնոց ընտրողական ցանկին մէջ։

*Մ. Տեր Մարտիրոս Մարտիրոսեան*

## ՏՂԱՄԻՑ ԴՈՒՐՍ

Ամենիս համար էլ յայտնի և հին ճշմարտութիւն է որ հայերս դարերի ընթացքում մեզ տիրող տարբերի վաս կողմերը ընդունելով՝ մեր մէջ միս ու արիւն ենք դարձրել մարդը ստրացնող ամեն վատ յատկութիւն։ Այո, այդ գիտէինք, բայց չը գիտէինք թէ՝ մենք ամբողջովին, ոտից-գլուխ ստրկի մէջ ենք թաղված։ Եւ ի՞նչպէս, ո՞ր տեղից գիտենայինք, քանի որ դեռ մի քանի առաջ, մեր ամբողջ հասարակական գործունէութիւնը սահմանափակվում էր զպրոցական և եկեղեցական գործերի նեղ շրջանակի մէջ, մեր զոհողութիւնը հասարակութեան օգտի համար լինում էին սանթիմներ և այն էլ ոչ ամեն տեղ։

Մեծ զոհողութեան պէտքը չէր զգացվում, որովհետեւ հայ ժողովրդի համար կենսական լայն պահանջներ չը կային։ Մեր կեանքը մի հոտած, անշարժ լիճ էր, որի անշարժ մակերեւոյթի տակ թագնված էին դարերով ժողված բարոյական ախտերը։

Փոթորիկ, ուրագան էր հարկաւոր մեր հոտած-լիճ-կեանքը յուզելու, տակն ու վրա անելու, և փոթորիկը վրա հասաւ—յեղափոխական շարժումները։ Ցնցվեց մեր լճացած կեանքը, ստրկացած հայկական զանգվածը տակն ու վրա եղաւ, նոյնիսկ յեղափոխութեան մէջ հայ ժողովրդը փոխեց իր դարերով կուլ տուած անմաքրութիւնները։ Ու մենք տեսանք, զգացինք որ մինչեւ վիզներս տղմի մէջ ենք, մարդու կերպարանքը կորցրած, ցեխոտ։

Այդ ճահճային և գարշահոտ տղմից սեղմված կոկորդները—գոչեցին՝ դուրս գանք այս տեղից, դուրս, խեղդվում ենք, մեռնում ենք։ Եւ այդ կոչը, աղաղակը արձագանգ գտաւ հայ ժողովրդի մէջ սթափեցրեց նրան։

* * *

Այո՛, հայ ժողովուրդը սթափվեց, աղաղակեց և աղաղակում է—դուրս, դուրս գանք այս տղմի միջից։

Եւ նրան պատասխանում են մի քանի ցած արարածներ—մնացիր դու տղմի մէջ, որովհետեւ եթէ դու դուրս գաս, մենք կը խեղդվենք—մենք չենք կարող ապրել առանց այդ տղմի։

Իսկ մենք այդ ցածերին պատասխանում ենք։ լռեցէք օձի ձագեր, այլեւս ժամանակն է։ հայ ժողովուրդը էլ չի կարող տղմի մէջ մնալ։ ստրկական տիղմը հալեց ու մաշեց նրա մարմինը, այրեց ու նեխեց նրա թոքերը, խեղդեց նրա կենսական ուժերը։ Ստրկական տիղմը ծնեցրեց ձեզ նման ստրկահոգի հացկատակներին և դուք բաւական ծծեցիք նրա արիւնը յեղափոխականի, գրագէտի, վաշխառուի, կղերի և էֆէնտիի մորթի մէջ մտած։ Հայ ժողովուրդը անպատճառ պէտք է դուրս գայ իրեն խեղդող տղմի միջից։ Դուք մնացէք այնտեղ, ամեն միջավայրի յարմարվող, երեկ յեղափոխական՝ այսօր ստրուկ, երեկ հայրենասէր, այսօր գաւաճան և հակառակը. երեկ քաջ՝ այսօր վախկոտ ղղելի արարածներ։

Խրվեցէք տղմի մէջ, բոլորովին խեղդվեցէք, որպէս զի հայ ժողովուրդը ինքը շուտով դուրս գայ տղմի միջից և օր առաջ աղտոտի ձեզ նման անպատուաբեր վիժուկներից։

ՎԱՐԴՈ

—)·(—

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 31 Հոկտ.

Մէկ քանի շաբաթէ ի վեր օրուան խնդիրներու վրայ չէի գրէր սպասելով որ Օրմանեանական կատակերգութիւնը իր ամբողջ արարուածներովը ներկայացնեմ «Շարժումի» ընթերցողներուն։ Երեք շաբաթի չափ տուընը նստելով Օրմանեան տեսաւ որ գինքը հարցնող փնտռող չկայ, ոչ կառավարութեան կողմանէ և ոչ ալ ազգին, ուստի «չար նաչար» երկու օրինակ հրաժարական գրեց, մին պալատ ղրկելու համար և միւսը ատլիէն։

Պալատ ղրկուած հրաժարականը սառաջին գործատարին ձեռքը տալով ետ ղրկեր են առանց ձեւակերպութիւններն անգամ յարգելու. իսկ ատլիէինը հետեւեալ օրը կրօնից տեսուչը առաւ անձամբ ետ բերաւ արձանագրելու անդամ նեղութիւնը չի կրելով։ Ասի հրաժարականի մերժում չէր այլ պարզ անարգանք մը, վասն զի մինչեւ ցարդ ոչ մէկ Պատրիարքի այս կարգի բան մը պատահած է։ Եւ սովորութիւնը այն է որ հրաժարականները կա՛մ գրաւոր պաշտօնագրով մը և կամ մասնաւոր պաշտօնատարներու միջոցաւ կը մերժուէին և ոչ թէ այսպէս երեսին նետուած նման վերադարձնել։

Բայց խնդիրը հոդ չէ. Օրմանեան այնքան բարակը փնտռող չէ, ինքը գոհ է որ հրաժարականը չընդունուեցաւ ու առաւ պահեց զանոնք։ Անցան մէկ երկու շաբաթներ եւս, ո՛չ ձայն կայ և ոչ ալ գործերը փոխուեցան։ Ժողովները իրենց նիստերը կը դումարէին կանոնաւորապէս ու այս պարագան Օրմանեանի գործին չէր դար, որովհետեւ կուզէր որ իրմով միայն գոյութիւն ունենայ Պատրիարքարանը. միջոց մը ճարելու էր վերադառնալու համար, ուստի Քաղ. Ժողովի մէկ քանի անդամներուն միջոցաւ առաջարկել տուաւ Խառն Ժողովին մէջ որ Պատրիարքը հրաւիրուի իր պաշտօնին։ Եկեղեցական անդամներ ընդդիմացան «մինչեւ որ Պատրիարքին հրաժարելուն շարժառիթ եղող պարագաները մէջտեղէն չի վերնան, չենք կրնար հրաւիրել» կըսէին։ Ասոր վրայ Արթին փաշա յայտարարեց թէ պալատին մէջ գումարուած յանձնաժողով մը որուն ինքն ալ կանդամակցի շնորհներ (.՝) ծրագրած է և Սուլթանն ալ հաւանութիւնը տուած է ու ասոնք մօտերս Պատրիարքարանի պիտի հաղորդուին։ Այսքան զրոյց մը՞ արդէն բաւական էր. իսկոյն Քաղ. Ժողովի անդամներ սկսան պոռչտալ թէ «ուրեմն Պատրիարքը հրաւիրելու է երբ իր առաջարկութիւնները լսուած են», եկեղեցականները կըսէին միշտ՝ «թող իրատէն ելնէ, յետոյ կը խորհինք»։ սակայն քաղաքական ժողովականները առանց մտիկ ընելու և սպասելու՝ իրենց կողմանէ պատգամաւորութիւն մը ղրկեցին Պատրիարքին որ անմիջապէս հաւանեցաւ. երբեք չմտածելով թէ Խառն Ժողովի կողմանէ եկած պատգամաւորութիւն մը առանց եկեղեցականի չըլլար։ Ուստի ելաւ անմիջապէս պալատ գնաց և յաջորդ օրն ալ Պատրիարքարան իջաւ ու Մայր եկեղեցւոյ մէջ խօսեցաւ այն հռչակաւոր քարոզը զոր արդէն կարդացած ըլլալու էք Պոլսոյ թերթերուն մէջ։ Մինչեւ այս թուականը 3--4 շաբաթներ անցած են և դեռ այս՝ «շնորհներուն» մէկն ալ իրականութիւն չի դտաւ. ոչ մէկ ստորակէտ փոխուած է նախկին վիճակէն։ Երթեւեկի մեծնոյն դժուարութիւնները կան ներքին նահանգներուն համար, իսկ արտասահմանի մասին ոչինչ։

Արդէն՝ իրատէներուն մէջ օտար երկիր գացողներու և անկից եկողներու մասին ոևէ խօսք եղած չէ. «նահանգ» բառը կայ և ատի անշուշտ արտասահմանի համար չէ որ կակնարկէ։ Տեղափոխութեան արգելքը բացարձակ է, այն ալ ոչ թէ վախու կամ յեղափոխականի մը մուտքին կամ ելքին առաջքը առնելու համար, այլ պարզապէս ամէն հայու գործին արգելք ըլլալու համար,

թող չտալու ամէն հայ մարդու որ իր գործը տեսնէ, վասն զի արտասահմանի մէջ իսկ հայերու տեղափոխութիւնը արդելքներու կը հանդիպի և մէկ օտար երկրէ ուրիշ օտար երկիր մը երթալու համար թիւրք հիւպատոսներէ անցագիր առնելը անհարելի եղած է։

Օրմանեան երբ Պատրիարքարան կուգայ կըսէ որ պալատի մէջ իրեն հաղորդեր են թէ Սուլթանը իրատէ ըրաւ Մահակ եպիսկոպոսը Ատանա երթալու և կաթողիկոսական ընտրութիւնը կատարելու։ Այս ալ սուտ է։ դեռ ո՛չ ձայն կայ և ոչ ալ այդ կարգի խօսք մը. կարծես մենք ընտրեանք կաթողիկոսական ընտրութեան խնդիր չունինք. անով զբաղող անդամ չկայ, ո՞ւր մնաց իրատէ ընող։ Ատանք այնպիսի խարեբայութիւններ են որոնք Օրմանեանէ միայն ծնունդ կրնան առնել։ Ատոնցմէ զատ Օրմանեան հիմակ ալ ելեր և խառն ժողովէն շնորհակալութեան գիր կուզէ—եղած շնորհներուն! համար—և պալատ պիտի տանի որ բան մը բրցնէ, նշան կամ դրամ. ա՛լ հատանք տանջուելէն, մեր վրայ ո՛չ ուժ մնաց և ո՛չ ալ նոյնիսկ մեր մէջը խօսելու և տրտնջալու կարողութիւն. զլուեցանք ամէն բանէ և այսքան զլուանքին մէջ դեռ չգտնուեցաւ մէկը որ վերջակէտ մը դնէ այս ամէնուն՝ երկու կապարներ քովէ քով դնելով։

* * *

Խորէն Աշըգեան մեռաւ։ Արդէն 6—7 տարի է ի վեր մեռած էր ան ազգին համար։ Ո՞ւր է լրագրական այն ջերմ հրատարակութիւնները և ժողովրդային եռանդը որ երեւեցաւ Ալէաթճեանի վախճանումին և յուղարկաւորութեան առթիւ։ Եպիսկոպոսները ամէնքն ալ բացի Եղնիկէն ի պաշտօնէ ներկայ էին Օծումին, և դամբանականը խօսեցաւ Պատրիարքը յայտնելով որ հանգուցեալը ծառայած է պետութեան և ազգին (.* .* .*) թէ Պատրիարքները կը քննադատուին միշտ, բայց ամէն խօսքի ականջ կախելու չէ, թէ մարդ բաղդ ալ ունենալու է քիչ մը ժողովրդին ամբողջական համակրութեանը արժանանալու համար ևն. ևն.

Այդ դամբանականը իր անձին պաշտպանողականն էր ամբողջովին, բայց կլլելու ժամանակը անցած է. ամէն ոք կը մտածէ և համոզուած է թէ օր մը Օրմանեանի համար պիտի ըլլայ այն ինչ որ չեղաւ և չյաջողեցաւ Աշըգեանի համար։

Աշըգեանի կենսագրականէն կիմանանք թէ Նիկոմիտիոյ Քէրէմէթ գիւղին մէջ ծնած է եղեր. Աշըգեա՞ն և Քէրէմէ՞թ, իրարմէ որքա՞ն հեռու. Քէրէմէթի մէջ ծնող մը գոնէ քիչ մը «քէրէմէթ» պէտք չէ՞ր որ ունենար։

ՄԺՂՈՒԿ

---

ԹԱՒՐԻԶ, 12 Հոկտ.

Անցեալ տարի, Բերդաթաղի երկսեռ դպրոցների տեսուչը պաշտօնից զրկեց մի ուսուցչին, նրա աչքերի տկարութիւնը պատճառ ցոյց տալով։ Եւ այս տարի այդ «մրեւնոյն» տեսուչը «մրեւնոյն» ուսուցչին նորից հրաւիրեց պաշտօնի.\.\.\. Հակասական չէ՞ք գտնում այս վարմունքը։ Վնասակար չէ՞ք նկատում այս հակասութիւնը։ Խնդիրը մի ուսուցչի մերժելու կամ ընդունելու մէջ չէ կայանում, այլ դպրոցների օգուտի կամ վնասի, որ այդ երկու իրար հակասող որոշումներից հեռուելու է։ Անշուշտ կրթական գործը վնաս է կրելու նրա մերժելովը կամ ընդունելովը, ուսուցիչը կամ իսկապէս աչքից տկար էր կամ ոչ. առաջին պարագայում նրա կրկին ընդունելը վնասակար է և անարդարանալի մի գործ, իսկ երկրորդ պարագայում նրա նախորդ տարին մերժելը դարձեալ վնասակար և դատապարտելի է։ Մանաւանդ եթէ նկատի առնենք մէջ բերված պատճառը, որը եթէ ճշմարիտ էր, աւելի ծանրացած է լինելու. մնչ հետաքրքրողը մէջ բերուած այդ պատճառի ստոյգ կամ անստոյգ լինելը չէ, այլ երկու պարագայումն էլ տեսչի վարմունքի հակասութիւնն է և երկու պարագաներումն էլ ի վնաս կրթական գործին։

Ուրեմն, արդեօ՞ք իրաւունք չունինք յայտարարելու թէ այս կարգի տեսուչներ և այս կարգի ուսուցիչներ աշակերտներին անբարոյականացնում են.\.\.\. աշակերտը այս տգեղ վարմունքից ի՞նչ բարոյական դաս է առնելու. արդեօ՞ք չը պիտի ընտելանայ իր ուսուցչին (որի վարմունքը, նոյն տեսչի պաշտօնավարութեան տակ նորից պաշտօն ստանձնելու ստորնացումը, նկարագրի և արժանապատուութեան բացակայութիւնէ նշանակում) կամ իր տեսչի այս յեղյեղուկ և հակասական ընթացքի հետ, չը պիտի՞ ազդէ այս ելեւէջը նրա մատաղ մտքի և մաքուր սրտի վրա. նա չը պիտի՞ դառնայ յեղյեղուկ, հակասող, ստորնացող բնաւորութեան տէր, օրինակ առնելով իր ուսուցիչներից...։

Այս ընթացքով Պարսկահայը ապագայ չունի. երիտասարդութիւն չը պիտի ունենայ, այլ պարզապէս անբարոյականացած սերունդ պիտի ունենայ, որ արդէն առանց նրա էլ, հայութեան այս մեծ զանգուածը, անբարոյացած է Պարսկական և Թրքական վատ ունակութիւններով և դացող տէր պապան իր մտքին մէջ կանխաւ ըսած է եղեր «հող էիր, եւ ի հող դարձիս»։

Այս գաղթականութեան կարապետը ո՞վ եղած է, ոչ ոք գիտէ տակաւին։ Տեղւոյս թանգարանի վարչութիւնն քանի մը ամիս առաջ ձեռնարկեց քաղաքիս բոլոր հայ—ողջ թէ հանգուցեալ—մէկ ցուցակը պատրաստել եւ պահել զայն՝ տարուէ տարի հարկաւոր փոփոխումներն ու յաւելումները ընելով. այդ ցուցակէն, որ թէեւ լրացած չէ տակաւին, կարելի չէ հասկնալ թէ այս չէնքի հիմնադիրը ո՞վ եղաւ. միայն գիտենք թէ հին եկողները արուեստի զործաւորական կեանքէն ազատելու համար, հոս եկած են բաղդ փնտռելու։ Ժամանակին մեծ առիթներ կան եղեր շրջահայեաց՝ ու խելացի գաղթականին համար. հրեայները օգտուած են այդ առիթներէն. բայց մերիններն զոհացած են ուրիշի աշխատելով. եւ այսօր երկու բաղդակից գաղթականին մէջտեղ անջրպետ մը կայ, ի հարկէ նիւթական տեսակէտ նայելով։

Հայերը նշանակութեան արժանի դիրք մը չունին հոս. բացի քանի մը բացառութիւններէ. որոնք մատերու վրայ կրնամ հաշուել. միւսները ծանօթ են միայն հայկական շրջաններու մէջ։ Հայկական բարեմասնութիւնները չատ քիչ բացառութեամբ, անծանօթ են օտարներուն, բայց մեր սեւ ու մութ կողմերը հրապարակ կելնեն միշտ։ Այս գաղթականութիւնը միւս քոյր գաղթականութիւններէ աւելի օտարամոլութեան շաղին մէջ մեծ քայլ մը առած է, եւ աւելի ցաւալին սա է թէ շարունակելու վրայ է զայն։ Պատճառը խիստ պարզ է. ժողովուրդը ցնցելու։ յաճախ մարակելու եւ արթուն պահելու համար քիչ փորձեր եղած են. եթէ հոս ալ ազգային յեղափոխական կուսակցութիւններ, մամուլ, երթեւեկող յեղափոխականներ անպակաս ըլլային, այս գաղթականութիւնը կրնար լաւագոյն դիրք մը բռնել եւ միւսներէն չատ աւելի օգտակար ըլլալ, որովհետեւ հոս հայը չատ աւելի բարեկեցիկ է եւ կարող օգտակար ըլլալու համար։ Արդեօք ներելի չէ՞ հոս երկու խօսք ըսել, մեր Նիւ-Եորքի լրագիրներուն վրայ։

Նոյն օրինակ հակասական ընթացք է ունեցել «Թաւրիզի Հայ. Բար. Ընկերութեան» վարչութիւնը։ Այս տխրահռչակ վարչութիւնը անցեալ տարի իր կարուձեւի արհեստանոցի վարժուհուն պաշտօնանկ արաւ նրա խիստ վարմունքի և անճաշակութեան պատճառով։

Եւ այս տարի «մրեւնոյն» վարչութիւնը «մրեւնոյն» վարժուհուն պաշտօնի կոչեց.\.\.\.։ Հակասական չէ՞ք գտնում այս։

Մանաւանդ, հակառակը, մէջ բերուած պատճառներն էլ «ժամանակով» անհեռանալիք կամ բարեփոխվելիք պատճառներ չեն, նրանք բնաւորութեան դրոշմ ունեն։

Մենք դարձեալ չենք զբաղվում մէջ բերված պատճառների ստոյգ կամ անստոյգ լինելու խնդրովը. մեր ուշադրութիւնը գրաւում է միմիայն այն բացարձակ հակասութիւնը, որ այս վարմունքի մէջ գոյութիւն ունի. ստոյգ լինի կամ չը լինի, երկու պարագայում էլ վարչութիւնը մեղաւոր է. կամ մերժելու և կամ ընդունելու համար, նայած պատճառների ստուգութեան կամ անստուգութեան։ Եթէ ստոյգ էր, ինչո՞ւ համար նորից հրաւիրեց, եթէ ստոյգ չէր, ինչո՞ւ համար անցեալ տարի չընդունեց....

Խորին կերպով ցաւում ենք այս տգեղ և տխուր երեւոյթների վրայ։

* * *

Վերոյիշեալ ընկերութեան «Մանկապարտէզը» այս տարի փակվեց, շնորհիւ ներկայ վարչութեան յաջո՞ղ գործունէութեան (.*)։ Եւ խեղճ փոքրիկները կամ փողոցները թափառում են և կամ բողոքականների դպրոցները լցնում....։ Այս ընկերութիւնը հիմնվել է ճիշդ նրա համար, որ մէջ այնչափ տարբեր լեզուներով խօսողներ չի կային, որչափ կան այս բազմազան քաղաքին՝ Նոր Բաբելոնին մէջ, ուր հայերն ալ իրենց յատուկ տեղը կրցած են բռնել 18 տարիներէ ի վեր։ Եւ ո՞ր երկրի մէջ կարելի չէ ալեզարդ Հայկ նահապետին զաւակները չի գտնել. հայ գաղթականի ոտից հետքերը կարելի է տեսնել հիւսիսի ձիւներուն վրայ, անապատներու աւազին մէջ եւ ամէն ուր, որ մահկանացուն կրցած է հասնիլ. եւ եթէ աշխարհիս խուզարկուները չի փութան շուտով հիւսիսային բեւեռը հասնիլ, թերեւս հայ գաղթականը, իր մեղքը, որ դարերէ՞ի վեր կուտակած է մեր ազէտ կղերի ձեռքով—եւ իր ազգային դժբաղդութիւնը շալկած՝ հոն ալ հասնի՝ բնակութիւն հաստատելու համար։

Խաղաղականի այս խաղաղ ափերուն վրայ 500 է աւելի հայեր, մեծաւ մասամբ բոյն ու տուն դրած են այդ-ինչներու եւ բերրի հողերու մէջ. ասոնք իրենց մայրենի աշխարհէն մեկնած ժամանակ թերեւս իրենց համար «ա՛յր, ուղղեան» կարդացող տէր պապան իր մտքին մէջ կանխաւ ըսած է եղեր «հող էիր, եւ ի հող դարձիս»։

Այս գաղթականութեան կարապետը ո՞վ եղած է, ոչ ոք գիտէ տակաւին։ Տեղւոյս թանգարանի վարչութիւնն քանի մը ամիս առաջ ձեռնարկեց քաղաքիս բոլոր հայ—ողջ թէ հանգուցեալ—մէկ ցուցակը պատրաստել եւ պահել զայն՝ տարուէ տարի հարկաւոր փոփոխումներն ու յաւելումները ընելով. այդ ցուցակէն, որ թէեւ լրացած չէ տակաւին, կարելի չէ հասկնալ թէ այս չէնքի հիմնադիրը ո՞վ եղաւ. միայն գիտենք թէ հին եկողները արուեստի զործաւորական կեանքէն ազատելու համար, հոս եկած են բաղդ փնտռելու։ Ժամանակին մեծ առիթներ կան եղեր շրջահայեաց՝ ու խելացի գաղթականին համար. հրեայները օգտուած են այդ առիթներէն. բայց մերիններն զոհացած են ուրիշի աշխատելով. եւ այսօր երկու բաղդակից գաղթականին մէջտեղ անջրպետ մը կայ, ի հարկէ նիւթական տեսակէտ նայելով։

Հայերը նշանակութեան արժանի դիրք մը չունին հոս. բացի քանի մը բացառութիւններէ. որոնք մատերու վրայ կրնամ հաշուել. միւսները ծանօթ են միայն հայկական շրջաններու մէջ։ Հայկական բարեմասնութիւնները չատ քիչ բացառութեամբ, անծանօթ են օտարներուն, բայց մեր սեւ ու մութ կողմերը հրապարակ կելնեն միշտ։ Այս գաղթականութիւնը միւս քոյր գաղթականութիւններէ աւելի օտարամոլութեան շաղին մէջ մեծ քայլ մը առած է, եւ աւելի ցաւալին սա է թէ շարունակելու վրայ է զայն։ Պատճառը խիստ պարզ է. ժողովուրդը ցնցելու։ յաճախ մարակելու եւ արթուն պահելու համար քիչ փորձեր եղած են. եթէ հոս ալ ազգային յեղափոխական կուսակցութիւններ, մամուլ, երթեւեկող յեղափոխականներ անպակաս ըլլային, այս գաղթականութիւնը կրնար լաւագոյն դիրք մը բռնել եւ միւսներէն չատ աւելի օգտակար ըլլալ, որովհետեւ հոս հայը չատ աւելի բարեկեցիկ է եւ կարող օգտակար ըլլալու համար։ Արդեօք ներելի չէ՞ հոս երկու խօսք ըսել, մեր Նիւ-Եորքի լրագիր-

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# ՀԱՅՔ Ի ՔԱԼԻՖՕՐՆԻԱ

Սան Վօքի Վալի անուն ընդարձակ դաշտին մէջտեղ չինուած, 15000 բնակիչներով 3րդ կարգի քաղաք մէ Ֆրէզնօն. որ Միացեալ Նահանգաց չամիչի կեդրոնը ճանչցուած է՝ իր արտադրած առատ չամիչին համար։ Ժողովրդի մեծ մասը, թերեւս աւելորդ է ըսել. այգեպան է եւ երկրագործ. թէեւ արհեստաւորները, բժիշկներն եւ պատուելի կրօնականներն ալ իրենց յատուկ եւ առանձին տեղը կը բռնեն։

Ֆրէզնօն թերեւս Նիւ-Եորքի մէկ մանրանկարը կրնայ սեպուիլ՝ չատ մը տեսակէտներէ նայելով։ Արեւմտեան այս ոստանիկը, որ Սան Ֆրանչիսկոյէն 200 մղոնի չափ հեռի է, տարբեր տարբեր ազգերու խառնակութիւն մէ. աշտարակաշինութեան ժամանակ՝ երբ լեզուները խառնուեցան, թերեւս Բաբելոնի մէջ այնչափ տարբեր լեզուներով խօսողներ չի կային, որչափ կան այս բազմազան քաղաքին՝ Նոր Բաբելոնին մէջ, ուր հայերն ալ իրենց յատուկ տեղը կրցած են բռնել 18 տարիներէ ի վեր։ Եւ ո՞ր երկրի մէջ կարելի չէ ալեզարդ Հայկ նահապետին զաւակները չի գտնել. հայ գաղթականի ոտից հետքերը կարելի է տեսնել հիւսիսի ձիւներուն վրայ, անապատներու աւազին մէջ եւ ամէն ուր, որ մահկանացուն կրցած է հասնիլ. եւ եթէ աշխարհիս խուզարկուները չի փութան շուտով հիւսիսային բեւեռը հասնիլ, թերեւս հայ գաղթականը, իր մեղքը, որ դարերէ՞ի վեր կուտակած է մեր ազէտ կղերի ձեռքով—եւ իր ազգային դժբաղդութիւնը շալկած՝ հոն ալ հասնի՝ բնակութիւն հաստատելու համար։

Խաղաղականի այս խաղաղ ափերուն վրայ 500 է աւելի հայեր, մեծաւ մասամբ բոյն ու տուն դրած են այգիներու եւ բերրի հողերու մէջ. ասոնք իրենց մայրենի աշխարհէն մեկնած ժամանակ թերեւս իրենց համար «ա՛յր, ուղղեան» կար-

աղքատ երախաները օտար դըպրոցներ չը յաճախեն։ Բայց այսօր, փառք Աստուծոյ, ընկերութիւնը 78,501 դրան (39,250 ֆր.) դրամագլուխ ունենալով հանդերձ, ինքն է պատճառ դառնում, որ երեխաները օտար դըպրոցներ յաճախեն...։

Վարչութիւնը ի՞նչ է մտածում արդեօք։ այդ ահագին դրամագլուխը ի՞նչ բանի է յատկացնելու, բացի կրթական գործից։ Ի՞նչ օգուտ ունի դրամագլխի բաղմապատկվիլը, քանի որ ներկայ սերունդը շատ մեծ կարիքներ ունի, որոնք միայն փողով կարող են լրանալ։ Բայց չը պէտք է դնել խոշոր դրամագլուխների, փառաւոր շէնքերի վրայ։ Նրանք ուշ կամ կանուխ կուլ են գնալու ռուսական բռնակալութեան, ինչպէս արդէն դրաւել են Կովկասի հայոց վարժարանները, նրանց շէնքերով ու եկամուտներով։ և ինչպէս որ նոյն բանը տեղի է ունենալու եկեղեցական կալվածների համար, մօտաւոր ապագայում։

Արեւի նման պարզ է, որ ռուսները մի օր տիրելու են Արարատեանը։ Քանի որ այս այսպէս է, մեր ջանքը լինելու է օր առաջ տոկուն, կըրթուած և նկարագրի տէր մի սերունդ պատրաստել, որպէս զի, այդ սերունդը կարողանայ պահպանել իրա ինքնուրոյնութիւնը և դիմադրէ նոր հոսանքին, գէթ մի որոշ ժամանակի համար։

Մանկապարտէզները փակելով է որ պիտի՞ հասնենք մեր նպատակին։՝։՝։

Արդեօք, այս միւնոյն նպատակին չը պիտի՞ ծառայեր բացվելիք «Պարսկաստանի Կեդրոնական դպրոցը», որ նոյն այդ ընկերութեան վարչութեան իմաստակութեան և տգիտութեան զոհ գնա՞ց...։

Երկու պարագայումն էլ տուժողը ժողովուրդն է. զրկվողը և ջնջվողը նա է։ Ո՞վ է պատասխանատուն։

ԳՆԴԱԿ

---

ՍՕՖԻԱ, 30 Հոկտ

Ինչպէս որ հաղորդած էի Ա. Բրամ Արամեանի հոգեհանգիստը կատարուեցաւ։ Դեր. այցելու հովիւը պատուելով Հայրենիքի ազատութեան խորանին նուիրեալ այդ թանկ զոհին յիշատակը, ներկայ գտնուեցաւ և աղդու քարոզ մը տուաւ։

Հայր սուրբը հակիրճ յորդորականով մը յիշեցուց ժողովրդին որ պէտք է յարգանքով ու վստահութեամբ վերաբերուիլ դէպի ազատութեան զինուորները, հետեւիլ անոնց շաւղին, որովհետեւ փրկութիւնը անկէ կախում ունի։ Ճանչնալ ճշմարիտ ու անձնուէր յեղափոխականը և միայն այդպիսիներին վստահիլ և մեր յոյսերու իրականացումը անոնցմէ սպասել. չմոլորուիլ խաբեբաներու ու կեղծ գործիչներու խոստումներէն։ Հայր սուրբին հայրական ու զգայուն սրտի թրթռումները արձագանք գտան խռնուած ժողովրդի սրտին մէջ և իր խօսքերը իրենց տպաւորութիւնը թողուցին։ Բայց ընթերցողները թող ներեն որ տարառթիւ մամուլին նիւթ եղած գրութիւններուն դիտողութիւն ընեմ։ Պնակալէպ «Իրաւունքի» Փիլիպէի աղատասէր ու ազգասէր թղթակիցը թուփի մը ներքեւ սլքուած՝ իր ամբողջ ժահրը կը թափէ, կը վրդովուի որ Արամեան անուն մարդու մը հոգեհանգիստ կը կատարուի, մինչդեռ անդին 40 տարի գործողները մոռացեալ կըլլան։

Այդ գրողը վաղուց է որ գիտակից ժողովուրդի անարգանքին ու արհամարհանքին արժանացած է. մարդ նոպկանքկրզպայ, երբ կենթադրէ որ նահատակի մը յիշատակի առջեւ իսկ, կուսակցական ատելութեամբ կը գինուի։ Արամեանին անձանոթ բայց իր գործերուն մօտէն տեղեակ եմ. իր նկարագրի ու ոգւոյ մաքրութիւնը ու վեհութիւնը ցոյց տալու համար սա փաստը յառաջ պիտի բերեմ. նա յեղափոխութեան ծիլն էր որ ամբողջ Բասէնի դաշտը ծաղկեցուց։ Փամֆնակ մը ի՞նչ, ի՞նչ պատճառներէն դժտուած, հեռացաւ։ Եթէ նա Հայրենիքին ու «գործին» նուիրուած չըլլար, կրնար ուրիշներու պէս արտասահման ապաստանիլ ու նոր-դաւանանք մը քարոզել, բայց նա նուիրուած իր սկզբունքներուն ու գործին, նորէն երկիր մտաւ, հալածուեցաւ, բանտարկուեցաւ ու դատապարտուեցաւ ցկեանս բանտարկութեան։ Այդ դժոխային բանտերու խորշերու մէջ իսկ անսասան մնաց իր համոզումներու վրայ, նա է որ կը վարէր կոմիտէական գործերը։ Այդ մարդը «յոյժ ճնասակար հայ» մը ըլլալուն համար է որ զինքը կախեցին։ Եթէ այդ պնակալէզ թերթի պաշտած «մարդերէն» ըլլար, պիտի հաշտուէր իր ճակատագրին. հանգիստ պիտի նստէր ու պիտի սպասէր իր օրերուն և օր մը այդ «բարձրագոյն ներումը» չպիտի ուշանար։ Արդեօք Հայրենիքի սեղանին հայուն ինչն է աւելի ընդունելին, իր հարստութիւնը, կիրքը թէ իր «հոգին»։

Այդ գրողը որ Զաքրեանի անունով կուզէ նսեմացնել Արամեանի պայծառ անունը, ինքզինք կը մատնէ։ Զաքրեանը ժամանակին գործիչ եղեր է, բայց ներկայի պահանջքներու անյարմար է։ Զէյթունը երկու անգամ ապստամբեցաւ։ Մի՞թէ Զաքրեանը այդ միջոցին միայն ազատ երկիրներու դիւանները թափառելով իր լեռնցիներուն պիտէ օգնէր։ Ռումանիոյ մէջ վարած ցոփ ու զեխ կեանքին վարագոյրը չը պիտի բանանք, որովհետեւ իրեն ներողամիտ միշտ գտնուած ենք։

Բայց դուք, իժեր ու սողուններ! ձեր դաժան սիրտը խայթ չունի, դուք յեղափոխութեան անկման առաջին ծափահարողները պիտի ըլլաք։ Դուք օտար է.ք հայուն ցաւերուն։ Ձենք կատենք զձեզ, դուք հայրենիքի զոհերը քարկոծելու սիրտ ունիք, կախաղան բարձրացողին յիշատակը կարատաւորէք, իսկ մեր սիրտերը այդ դիւցազներուն տաճարը պիտի ըլլայ։

Թղթակից

Ց. Գ. — Երկաղ մըն ալ փողոցային փալասի կտորին իր միմոսական մարմաջներուն։ Արդեօք Արամեանի լուսանկարով Հայաստանեաց եկեղեցւոյ ծէսը պղծուեցաւ որ բարձրագոյն ազատութիւն կը հրաւիրէ։ Հայաստանի սրբավայրերը քիւրաներուն հօտերու ու տավարներու աղբանոց դարձած է. ատոր ի՞նչ ընելու է։ Եթէ բծախնդիր էք, եկեղեցւոյ սրբութիւններուն՝ անոր ճար մը ընելու էք։

Նոյն

---

## ՄԵՐ ԲԱՐԻՔԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ

Այսօր մենք մեր ձեռքում ունինք Գալֆայեանի յայտարարութիւնը ֆրանսերէն լեզուով, որը սովորական ըէկլամ չէ. և իսկապէս խաբեբայութեան ձեւն ունի։ Գալֆայեանի վրայ «յարձակողները» կարող են շատ և շատ պակասութիւններ ունենալ, բայց իրաւունք ունեն այդ տեսակ պակասութիւնները

---

ներուն եւ խմբագիրներուն. ի՞նչ հարկ կայ ուրեմն, Նիւ-Եօրքի մէջ իրարու գլուխ պատռելու (ուր հազիւ մէկ թերթ կրնայ ապրիլ). պահ մը այդ նոր Վսփորի ափերը թող ապրի՝ արեւմուտք եկէ՛ք, այս ազգային անմշակ, խոպանացած բերրի դաշտը մշակելու. հոս մեծ պէտք կայ հայ լրագրի մը, եւ մեծ դիւրութիւն զայն պահելու կամ պահել տալու համար։ Ինքզինքը ազգին նուիրելու երդում ընող անձանց համար առապզտիկ ասպարէզ մը, որ սակայն կրնայ շատ ընդարձակուիլ։ Վարդ մը յառաջ բերելու համար արտավար մը հողի պէտք չէ կայ բնաւ։

Ֆրէզնոյի հայոց գովելի կողմերը ձերընթերցողաց ներկայացնելէ առաջ կը փափաքիմ անոնց մութ եւ քննադատելի կողմերը մարակել շարք մը յօդուածներով՝ որոնք տարակոյս չունիմ թէ պիտի կրնան իրենց օգուտը ունենալ։ Ես չեմ վերաբերիր այն մարդոց որոնք կը կարծեն թէ անհատի մը կամ խումբի մը այս կամ այն սխալն ու յանցանքը պահելով կարելի է զայն բուժել օր մը. «այքովդ կը տեսնես, քղանցքովդ

ծածկէ» վարդապետութեան չեմ հաւատար երբէք։ Բնութեան օրէնքն է որ յանցաւոր մը իր պատիժը կրէ՝ թերեւս ուրիշներուն խրատ մը ըլլալու համար։

Բացի քանի մը ընտանիքներէ եւ անհատներէ Ֆրէզնոյի մէջ հայ չկայ՝ բառի բովանդակ նշանակութեամբ. ըսել կուզեմ թէ հայ չեմ նկատեր զանոնք որոնք իրենց անուան ծայրի «եան»էն զատ ուրիշ բան մը չունին՝ հայ ճանչցուելու համար. սակայն շատեր այդ «եանն» ալ բեռ մը սեպելով, ան ալ «հատանեն եւ ի հուր արկանեն»։ Մարդ կապշի հոս երբ կը լսէ Գահրիմանեանը «ճայընթ» կանուանուի (թարգմանարար անշուշտ), Ասլանեանը՝ «լայըն» եւն. հայուհիք ալ զերծ մնացած չեն այս հիւանդութենէն՝ իրենց անունը տգեղ թարգմանութեամբ, երբեմն նմանողութեամբ անգլիերէնի դարձնելով։ Սակայն հարկ չեմ սեպեր այս վերջինին վրայ ծանրանալ շատ. «այն որ լսելու ականջ ունի, կը լսէ» արդէն։

Սակայն եթէ խնդիրը միայն անուն փոխելու մէջ ըլլար, շատ թեւ կերպիւ պիտի կրնայինք անցնիլ այդ իմաստակութեան վրայէն. մեր այս բարեկամներն իրենց անունէն առաջ իրենց սիրտը կը փոխեն արդէն՝ եանքի կըլլան առանց անոնց լեզուն, սովորութիւնները եւ բարքերը ունենալու։ Երբ մարդ այսօրինակ թեթեւութիւններ կը տեսնէ իր ազգին մէջ՝ պահ մը կը փորձուի Արծրունիի հետ ձայնակցիլ թէ «մենք կապիկ ազգ ենք»։

Թէ ինչպէ՞ս կը մեծնան այսպիսիներուն զաւակները շատ դիւրին է հեռատեսնել. երբ հայ բողոքականաց կիրակնօրեայ վարժարանը երթաս հոն կը գտնես ճշգրիտ պատկերն մատաղ պզտիկներուն, որոնց վրայ այդչա՛փ յոյսեր կը տածենք։ Այդ վարժարանը, ուր սուրբ գիրք կուսուցանեն, պիտի գտնես պզտիկներով լեցուն։ Ամերիկայի մէջ ուրիշ ո՛եւ է տեղ այնչափ հայ մանկտի կարելի չէ միասին գտնել. ասոնցմէ շատերն «Տօմ, Տիկ Անա Հարրի» են արդէն. Սուզին, Լուսին ու Մէրին հասարակ անուններ են հոն. խօսակցութիւնը հայերէն չէ այս պզտիկներէն շատերուն մէջ, որոնք իրենց օրօրոցէն սորված են «ուրիլիներ սիրեր»։ Եթէ պատահմամբ ասոնցմէ մէկին հայերէն բան մը հարցունես, պատասխանը անգլիերէն կըսատանաս՝ այնպիսի ժպիտով մը որուն մէջ կարծես քեզ կրսեն «անգլիերէն խօսէ, իֆ եու փլիս»։ Սակայն ի՞նչ կըլլայ եղեր. ո՞չ ապաքէն բոլոր լեզուներն ու ազգերը Աստուծոյ են. քանի որ սուրբ գիրք կուսանին այս պզտիկները, իրենց պարտականութիւնը կատարած կըլլան արդէն...։ Աւելի ցաւալի երեւոյթ մը այս կիրակնօրեայ վարժարանի վարչութեան ձեւն է։ Կամաւոր քարոզիչը, կամ կիրակնօրեայ վարժարանի առաջնորդը կը հաւատամ թէ անկեղծ հայ մըն է, որովհետեւ իր խօսքերն ու ազգային դաւանանքը այդպէս ցոյց կուտան, բայց զարմանքս չեմ կրնար պահել երբ կը տեսնեմ թէ այդ պզտիկներն անգլիերէն կերգեն, սուրբ գիրքը անգլիերէն կը կարդան եւ կը սորվին։ Այս մասին բողոքներ բարձրացնող կանանց եւ մարդոց հանդիպած եմ քանիցս, բայց այդ բողոքներ ոչինչ օգուտ կրցած են յառաջ բերել։

մատնացոյց անել նոյնիսկ ամենախիստ կերպով։ Կրկնում ենք, ուրիշ բան թէ Դալֆայեան տաղանդ ունի և նրա հակառակորդները ուրանում են այդ տաղանդը, բայց Դալֆայեանի պաշտպանները պարտաւոր են մատնանիշ անել և Պ. Դալֆայեանի արած սխալը։

Տաղանդաւոր մարդուն պատաբեր չէ աչքերը թող փչելով գործ տեսնել։

Տաղանդը պէտք չունի բէկլամի։

Մեզ թոյլ ենք տալիս մեր Փարիզի թղթակիցներից խնդրել որ գաղափարով և ուղղութեամբ հակառակ մարդոց հետ գրական-պայքար մղած միջոցին չը մոռանան թէ հակառակորդը կարող է շատ վատ մարդ լինել, բայց և երբեմն ճշմարտութիւն էլ ասել։ Ու այդ ճշմարտութիւնը երբէք չը պէտք է խեղդել։

Եթէ Դալֆայեանի հակառակորդների մէջ կան խաչագողներ, այդ չէ նշանակում թէ Պ. Դալֆայեանի նոյն տեսակ քայլը պէտք է ծածկել։

Իսկ Պ. Դալֆայեանին խորհուրդ կըտանք յոյսը դնել իր տաղանդի և իր աշխատութեան վրա և այնպէս առաջանալ իր արուեստի մէջ. և մեր ձեռքը ունեցածի նման բէքլամներից խուսափել։

ԽՄԲԳ.

## ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Թիֆլիսի դատաստանական պալատը արդարացուցեր է «Մշակ»ի խմբագիր Ա. Քալանթարեանը և Հ. Առաքելեանը ուրոնց դէմ բողոքած էր Գարեգին վրդ. Սաթունեան և Շուշիի հայոց հոգեւոր վարչութիւնը Առաքելեանի մէկ յօդուածը զրպարտութիւն համարելով։

— Էջմիածին կը խօսուի թէ Կաթողիկոսը պիտի երթայ Թիֆլիզ և ձմեռը հոն պիտի անցնէ։

— «Արաքս» հանդէսի խմբագիր Պ. Սիմոն Դալամիրեանց վախճաներ է իր ծննդավայր Երեւան քաղաքի մէջ։

— Հնչակը որ ամբողջ տարին դադրած էր նորէն հրատարակուեցաւ։ Պաշտօնական յայտարարութիւն կայ որ նախկին կեդրոնը հրաժարած է և հինգ անդամներէ նոր կեդրոն մը կազմուած է։

Ասկէ պարզ կերեւայ թէ բուն Հնչակեան կուսակցութիւնը կը շարունակէ իր գոյութիւնը։ Հիմա, «Վերակազմեալ ազգային Հնչ.» վարիչներուն կը մնայ «Հընչակեան» տիտղոսն ալ վերցնել իրենց վրայէն, և կոչուիլ «Զուտ Ազգային Վերակազմեալ յեղափոխական-կղերական կուսակցութիւն»։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գուպէթհոմնէն Նոյմ. 9ին (Ը. Ե.) կը հեռագրեն թէ ժէնէրալ Ուիտին թնդանօթաձիգ զօրքերու պատերազմական պաշարը վերջացեր է։

Լօնտրայի մէջ լուր կը պարտի թէ ժէնէրալ Ֆրէնչ պիտի երթայ Քար գլխաւոր հրամանատարին ներկայացնելու անձնատուր ըլլալու պայմանները և ծրագիր մը առաջարկելու յուսահատական վիճակէն ազատուելու համար։

— Պօէրները կը շարունակեն կեդրոնանալ Դը-Արի և Քուէնթոնի շուրջը։

— Բաղուտներու բռնած դիրքը կը նեղէ Օրանժցիները։

— Լօնտրայի պաշտօնական «Ուայ» թերթը հրատարակած է Թրանսվալի անգլիական զօրքերու հրամանատար ժէնէրալ Պիլլերի հետեւեալ հեռագիրը եւրոպական Նոյեմբեր 8ին.

«Գնդապետ Քէքէվիչ Քէմպըրլէյէն կը հեռագրէ. ամէն ինչ աղէկ է, մինչեւ հիմակ լուրջ յարձակում մը եղած չէ։ Զնչին ռմբակոծութիւն մը. ժէնէրալ Ուիտ ապաւիններու միջոցաւ կը հաղորդէ թէ վիրաւորեալները և քանի մը քաղաքացիներ Լատսմիտէն դուրս տարուած են և չորս մղոն հեռաւորութեան վրայ տեղաւորուած, ու ռմբակոծուելէ զերծ պիտի մնան։

— «Թայմզ»ը կը հաղորդէ թէ Բաղուտները Անգլիային հատատարիմ մնացած են. անոնք մերժած են «Ազատ Պետութեան» հատած հունձքերը հնձել, որոնք ոտքերու տակ կը փճանան։

— Կրէտէէն կը հաստատուի թէ Մեծ Պետութեանց տուած օգնական զօրքերը ամէնքն ալ շուտով պիտի թողուն Կրէտէն։

— «Թայմզ»ի Շանկայի թղթակիցը կը հաղորդէ թէ Ճաբոնի և Ռուսիոյ յարաբերութիւնները հեռաձգեալ կը լարուին։ Ճաբոնցիները Քորէա և Զինական նահանգներու մէջ իրենց գործունէութեամբ առաւելութիւն մը ձեռք բերած են, որը կը խոստանի թէ բնիկները և թէ ռուս պաշտօնեաները։

— «Թան» կը հաղորդէ թէ իշխան Ֆէրտինանտ պետութենէն իրեն համար նշանակուած գումարին կէսը մերժեր է աչքի առջեւ ունենալով երկրին անձուկ վիճակը։

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն թէ ռուսները կուզեն օգտուիլ Անգլիոյ խառնուած վիճակէն, և Աւղանիստանի տիրել։

— Հոկտեմբեր 31ին Պօէրները կատաղաբար յարձակեր են չը նայելով անգլիացիներուն սաստիկ ռմբակոծութեան, Մակ-Քինկի վրայ և մեծ կորուստով եւ մղուեր են։ Անգլիացի երկու սպայ և քանի մը զինուորներ սպանուեր է, քանի մը հոգի ալ վիրաւորուած են։

— Ռուսական դեսպանը նորէն բողոքագիր մը տուեր է Թուրք կառավարութեան պատերազմական ծախքերը մինչեւ հիմակ չը վճարելու համար։

## ԹԱՏՐՈՆ «ԱՆԿԷԼ ՕԼՎՕՖ»

«Վէսէլլօ» հայ թատերական խումբը, այս գիշեր, նոյեմ. 6, պիտի ներկայացնէ՝ «Արթիստ կամ Դերմըզը Մէյիանէ ճինայէթի» տրամ-գօմէտի 3 արար։

Խիստ ծիծաղաշարժ գաւեշտ մը։

Վաղը կիրակի գիշեր նոյմ. 7, պիտի ներկայացնէ՝ «Սահթէ Մըզտար» գօմէտի 3 արար։

Ծիծաղաշարժ գաւեշտ մը։

## ԱԶԴ

«Հայերէնի, ֆրանսերէնի, թուրքերէնի, տոմարակալութեան և մանիֆեսթուրայի քաջաեղեակ և Պոլսոյ հրապարակէն լաւ ճանչցուած տուրի մի ոմն, կը խնդրէ պաշտօն թէ՝ Պուլկարիոյ ի թէ՝ արտասահմանի մէջ. կըստանձնէ նաեւ առժամանակեայ այցելութեամբ առեւտրական տոմարներու կարգադրութիւնը։ Պէտք ունեցողներէ կը խնդրուի գրել առ Տ. Կարապետ Քեհեաեան, ժամագործ թիւ 21 ուլիցա Թոքովսքա Սոֆիա։

## ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

— Համբարձում Համբարձումեան, կէյվէ գիւղացի, սափրիչ ուր որ է թող հասցէն խմբագրութեանս հաղորդէ Ամերիկայէն կը փնտռուի։

Печатница „Взаимность“ Варна.

---

ռել։ Եւ կը ցաւիմ որ առաջնորդ պարոնն ալ կը թոյլատրէ այս անմեղ փոքրիկները որ իրենց երգերն ու աղօթքները օտար լեզուով ղրկեն խնկելի բարձրեալին . . . ։

Դեռ աւելի ցաւալին կայ. հայ բողոքականներէ մաս մը չի կրնալով հանդուրժել այս ժողովարանին, ուր քարոզները եւ երգերը հայերէն են դէթ պաշտամանց ժամանակ, ուրիշ եկեղեցի մը կազմած են. (գիտնալու է թէ հոս եկեղեցի կազմելու չափ դիւրին գործ չկայ). իրենց քարոզիչը ամերիկացի միսիոնար մըն է, որ տարիներ առաջ Հայաստան պաշտօն վարած ըլլալով՝ հազիւ «փարլիս եւ փարիւրկիւն» մը կը յիշէ»։ Այս ալեւոր միսիոնարը, որ բազմաթիւ հակառակորդներ ունի հայ բողոքական հասարակութեան մէջ, հայ բողոքական եկեղեցին, սկզբի երգէն մինչեւ վերջի փառաբանութիւնը, իր մայրենի լեզուով կը կատարէ. եւ կըսեն թէ երբեմն հայերէն ալ կը խօսի եղեր՝ անհասկընալի խառնուրդով մը որ կը նմանի եղեր այն միսիոնարի քարոզին, որ 40 տարի չինացոց լեզուն ուսանելէ վերջ, Զին եկեղեցւոյ մը մէջ խօսած ատեն կարողացած չէ հասկնալի դառնալ. կըսուի թէ այս միսիոնարի քարոզէն յետոյ Զինացի մը եկած ուրախութիւն յայտնած է պատուելիին ըսելով թէ «ես չէի գիտեր բնաւ որ ձեր լեզուին մէջ այդչափ Զիներէն բառեր կան եղեր»։

Հարկ չկայ ընթերցողին ըսել թէ այսպիսի օտարացեալ հայերէ ազգին համար չի կայ չահ, մինչեւ որ կարող ձեռքեր անոնցմէ դէթ քանիները չսթափեցնեն այդ ազգային կանխահաս մահու ճիրաններէն. ապատակելու է երբեմն խելակորոյս հիւանդը որ սթափի մահուանէ առաջ։ Կըսուի թէ բժիշկները շատ անգամ կեանքեր փրկած են ապտակելով միայն . . . ։

Որբերուն համար հանդանակութիւն կը բացուի, ցանկին վրայ կը գտնուին այն անունները միայն որոնք կերեւին Զէյթունի հանգանակութեան կամ ուրիշ ազգային հանգանակութեան մը ցանկին վրայ. ժողովի կերթաս, ընդհանրապէս նոյն դէմքերն են հոն. երբ փոսթը կուգայ նոյն մարդիկները միայն հայերէն թերթեր կըստանան. երբ վիճարանութեան մը ներկայ ըլլաս՝ նոյն մարդիկներն են որոնք պաշտպան կը կանգնին ազգային դատին, լեզուին ու անուան։ Ցորենի արտ մը կայ հոս ազգային, ուր որոմները բազմացած են յոյժ։

Ամերիկայի հայոց մէջ իմ ուշադրութիւնը գրաւող ամենագլխաւոր երեւոյթներէ մին սա ցաւալի իրողութիւնը եղած է թէ հոս օտարանալու մեծ դիւրութիւն ընծայող բանը հայ բողոքականութիւնը եղած է եւ կըլլայ ամէն օր։ Ես կը հաստատեմ, առանց բողոքական մը ըլլալու, թէ Լուտեր մեծ ծառայութիւն մը մատոյց աշխարհի. Ցէ՞ բողոքականութիւնը հրաշքներ գործած է ուրիշ ազգերու մէջ ու զօրացուցած զանոնք։ Բայց չեմ գիտեր թէ ինչո՞ւ նոյն բողոքականութիւնը տարբեր արդիւնք յառաջ բերած է եւ կը բերէ հայ ազգին համար. ուրիշ բողոքականներ իրենց ազգին կը կապուին. բայց մեր բողոքականներն, առանց սակայն գնահատելի բացառութիւններու մոռնալու. ընդհանրապէս օտարին կը մատնան։ Մենք հայ բողոքականը՝ հայ՝ կը դասենք, խարութիւն չենք դներ անոր եւ ուրիշ հայու մը մէջ. վասնզի մենք հայենք ոչ թէ կրօնքով այլ ազգայնութեամբ միայն. բայց երբ մէկը իր կրօնքին հետ օր մը իր ազգէն ալ կը պաղի ու կը ջանայ բաժնուիլ անկէ, կըստիպէ զմեզ տարբեր գաղափար մը կազմել։ Ամէն հայ մարդ թող իր ընտրած կերպով ջանայ երկնային թաղաւորութեան արժանանալ. մէկը ըսելիք չունի այդ մասին։ Բայց ամէն հայու պարտքն է երկրային թաղաւորութեան—ազգային ազատութեան—արժանանալու համար ազգային միակ համբէն ընթանալ. անոնք որ այդ չուղէն դուրս կելնեն, անոնց համար մէկ նուէր մը ունինք միայն զոր կրնան գտնել առ ձեռն բառարանի 234 րդ երեսի 12 րդ տողին վրայ։

Նամակս երկարեցաւ շատ. բայց նիւթս չի լմնցաւ տակաւին, երկարելուն համար ներողութիւն խնդրելով հոս կը կնքեմ քս գրութիւնս յաջորդիւ թողլով մի քանի ուրիշ կարեւոր կէտեր որոնք տարակոյս չունիմ թէ լաւագոյն գաղափար մը պտի տան Շարժումի ընթերցողաց այս հեռաւոր քոյր գաղութին վրայ։

ՀԱՑՈՒ ՁԱՅԱԿ

Ֆրէզնօ, 15 հոկտ.

——).(——